ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1464 25.09.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սեպտեմբեր ամսին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Սևանի ՁՊՎ, արձանագրել է թերություններ և խախտում:

Թերություններ՝

1. ՁՊՎ-ի երկրորդ խցի սպիտակեղենը կեղտոտ էր, իսկ սանհանգույցի ջրի ծորակը չէր գործում:
2. ՁՊՎ-ում պահվող անձանցից Արտուշ Սաշիկի Դավթյանը, իր բանավոր խոսքով հայտնեց, որ 17.09.2014թ-ին ժամը 11:00-ի սահմաններում ստացել է հանձնուք, որը չհերքեցին հերթապահություն իրականացնող ոստիկանները, սակայն <<Հանձնուքների հաշվառման>> գրանցամատյանում չկար ոչ մի գրառում նշվածի վերաբերյալ:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՊՏ № 3750
26. 09 2014թ.

Խախտում՝

Դիտորդական խումբը այցելելով տվյալ բաժին, հերթապահ մասում Դիտորդական խմբին դիմավորեց հաջորդիվ պարզած՝ ՁՊՎ-ի օրվա հերթապահ ոստիկանը, այն դեպքում երբ ՁՊՎ-ում տվյալ պահին պահվում էին մեկ կալանավոր և մեկ ձերբակալված անձիք:

Դիտորդական խումբը կարծում է, որ տվյալ դեպքում խախտվում է ՁՊՎ-ում պահվող անձի մի շարք իրավունքներ, որովհետև խցում գտնվող անձը անհրաժեշտության դեպքում ոչ մի

«Ոստիկանության Քաղաքացիաիրավական բաժին
Մուտք № 7509
25.09.2014թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

հարցով չէր կարող դիմել ոչ-ոքի, քանի որ ՁՊՎ-ի թե վարչական գոտում և թե ռեժիմային գոտում ոչ ոք չկար:

Դիտորդական խումբը կարծում է, որ տվյալ ոստիկանի ոչ մի պատճառաբանություն հիմնավորված չի կարող լինել, որովհետև իր ՁՊՎ-ի տարածքը լքելու անհարժեշտության դեպքում, պետք է նրան փոխարիներ հերթապահ մասում հերթապահություն իրականցնող ցանկացած ոստիկան:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հ արգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-_____ <<____>> _____ 2014թ.

Ձեր 24.09.2014թ. թիվ 2621/1464 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ու խախտումն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Գեղարքունիքի մարզային վարչությունում, ինչի արդյունքում Գեղարքունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները.

1. Ոստիկանության Սևանի բաժնի ՁՊՎ-ի 2-րդ խցում շուրջ 2 ամիս ձերբակալված կամ կալանավորված անձինք չեն պահվել, ուստի խցի սպիտակեղենը չի օգտագործվել և կեղտոտ չի եղել : Քանի որ խցերի ներքնակները մուգ գծանախշերով են, դիտորդների մոտ տպավորություն է ստեղծվել, որ սպիտակեղենը կեղտոտ է, սակայն երբ դիտորդների խմբի անդամներին ցուցադրվել է սպիտակեղենը, վերջիններս համոզվել են դրանում: Բացի այդ, սպիտակեղենի մաքրությունը ստուգվում է ամեն օր հերթափոխի ընդունման և հանձնման ժամանակ:

Այցելության ժամանակ դիտորդների խմբի անդամներից մեկն օգտվել է սանհանգույցի ջրի ծորակից, որի պտուտակը մինչև վերջ չի պտտել, սակայն ՁՊՎ ոստիկան Ռ.Համբարձումյանը առաջարկել կրկին փորձել և լրիվ պտտել, բայց վերջինս հրաժարվել է՝ դրան նշանակություն չտալով:

2. Ձերբակալված Ա.Դավթյանը ՁՊՎ է ընդունվել 17.09.2014թ. ժամը 10.55-ին: Ժամը 13.00-ի սահմաններում ոստիկանության Սևանի բաժին է եկել ձերբակալվածի հարազատ Ի.Դավթյանը և ներկայացրել դիմում՝ Ա.Դավթյանին հանձնուք փոխանցելու վերաբերյալ: Սահմանված կարգով դիմումին ընթացք է տրվել, հանձնուքը ստուգվել է ՁՊՎ ոստիկանի կողմից և ձերբակալված Ա.Դավթյանի ստորագրությամբ հանձնվել վերջինիս, սակայն ՁՊՎ ոստիկան Գ.Ղուկասյանը մոռացել է այն գրանցել <<Հանձնուքների հաշվառման>> գրանցամատյանում՝ պատճառաբանելով, որ զբաղված է եղել ՁՊՎ-ից կալանավորի տեղափոխման հարցերով: Երբ դիտորդների խմբի կողմից արձանագրվել է վերը նշվածը, այդ մասին զեկուցվել է հերթապահ

մասի պետին և նրա ցուցումով դիմումը անմիջապես հաշվառվել է <<Հանձնուքների հաշվառման>> գրանցամատյանում :

3. 18.09.2014թ. դիտորդների խմբի այցելության ժամանակ ոստիկանության Սևանի բաժնի ՁՊՎ ոստիկան Ռ.Համբարձումյանը ջրով լցված պլաստմասե տարան ձեռքին գտնվել է հերթապահ մասից դեպի ՁՊՎ բացվող դռան մուտքի մոտ: Տարայում եղել է եռացրած ջուր, որը կալանավոր Մ.Եսայանը խնդրել է ՁՊՎ ոստիկանից: Կալանավոր Մ.Եսայանի խնդրանքին անմիջապես արձագանքելու նպատակով՝ Ռ.Համբարձումյանը բաժնի հերթապահ մասի ավագ տեսուչ-հերթապահից խնդրել է ջուրը տաքացնել հերթապահ մասում գտնվող էլեկտրական թեյնիկով ու երբ դիտորդների խմբի անդամները մտել են հերթապահ մաս՝ ՁՊՎ-ի ոստիկանը, ավագ տեսուչ-հերթապահից վերցնելիս է եղել եռացրած ջրով պլաստմասե տարան և գտնվել է ՁՊՎ-ի տարածքում, որտեղից տեսանելի և լսելի է ՁՊՎ-ի ողջ տարածքը:

Ծառայողական քննության արդյունքում, հետագայում նմանատիպ թերությունները բացառելու նպատակով, ոստիկանության Սևանի բաժնի ՁՊՎ ոստիկաններ, ոստիկանության ենթասպա Ռ.Համբարձումյանը և ոստիկանության սերժանտ Գ.Ղուկասյանը խիստ նախազգուշացվել են:

ՀՀ ոստիկանության շտաբ